«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝	«Եղիշե Չարենցի և գրական ուղղությունների ուսուցումը 7- րդ դասարանում»
Առարկա՝	Մանկավարժություն
Հեղինակ՝	Անահիտ Մխոյան
Մարզ՝	Արմավիր
Ուսումնական հաստատություն՝	Փարաքարի միջնակարգ դպրոց

Բովանդակություն

Ներածություն……3

1. Եղիշե Չարենցի՝ գրական ուղղությունների որոնումներն ու «ձախ» մոլորությունները……..5

2. Եղիշե Չարենցի և գրական ուղղությունները թեմայի ուսուցման առանձնահատկությունները 7-րդ դասարանում……11

Եզրակացություն ……15

Օգտագործված գրականության ցանք……..18

Ներածություն

Գրականության ուսուցումն, առանց գրական-տեսական գիտելիքների ուսուցման, չի կարող ապահովել գրական երկի ամբողջական յուրացում: Այդ ուսուցումը սկսվում է գրական-տեսական գիտելիքներից, երբ, որևէ գրողի ստեղծագործությունն ուսումնասիրելիս անդրադառնում ենք տվյալ ժամանակաշրջանում գրականության մեջ տիրապետող գրական ուղղություններին և խոսում նրա գեղարվեստական առանձնահատկությունների մասին: Գրական ուղղությունները շատ հարմար է պարզաբանել գրական ստեղծագործությունը ուսուցանելիս, քանի որ գրողները ներկայացվում են նաև իրենց դավանած գրական որևէ ուղղության կամ մեթոդի անվանումով՝ ռոմանտիկներ, ռեալիստներ, կլասիցիստներ, ֆուտուրիստներ, սիմվոլիստներ և այլն: Գրական մեթոդն օգնում է գրողի աշխարահայացքը ճշտորեն պատկերացնելու:

Հայ գրականությունը գեղարվեստական բոլոր մեթոդների և հիմնական ուղղությունների ու հոսանքների տեսակետից սկզբից ևեթ համաքայլ է ընթացել համաշխարհային գրականությանը: Ահա թե ինչու ազգային գրականությունը դիտվում է որպես համաշխարհային գրականության բաղկացուցիչ մաս: Մեթոդ հասկացությունն իր մեջ իմի է բերում տեսական գեղագիտական ամենալայն շրջանակներ: Գրական մեթոդ է կլասիցիզմը, իսկ 20–րդ դարասկզբին ձևավորվեց նեոկլասցիզմը, ռոմանտիզմը, ռեալիզմը: Վերջինիս հիմքի վրա հետագայում զարգացում ապրեցին քննադատական ռեալիզմը և սոցիալիստական ռեալիզմը: Որպես գրական ուղղություններ՝ հանդես եկան սիմվոլիզմը, ֆուտուրիզմը և անցյալապաշտությունը(հեթանոսական գրական շարժումը): Հայ գրականության մեջ առավել դժվարամարս ու մինչև այսօր էլ բացահայտման և լուսաբանման խիստ կարիք ունեցող ժամանակաշրջան է 20-րդ դարասկիզբը, երբ գրական ուղղությունները հաջորդեցին մեկը մյուսին, սակայն այդ մասին տասնամյակներ շարունակ քննարկումներ չեն եղել: Խոսքը սիմվոլիզմի ու ֆուտուրիզմի մասին է, որոնք, իբրև գրական ուղղություններ, ունեցան իրենց ներդրումը և կարևոր դեր խաղացին մեր գրականության զարգացման հետագա ճանապարհին:

Այդ ուղղությունները նախանաշում էին նոր դարաշրջանի զարգացումը ու ժողովրդի հոգևոր կյանքի թարմացումը. նրանք նորոգում էին 20-րդ դարի

արվեստն ու գրականությունը: Նրանց բերած տեսական դրույթները նաև մարդկային կյանքի հոգեբանության արտահայտությունն էին: Սիմվոլիզմի հետ են կապվում Շանթի, Սիամանթոյի, Մեծարենցի, Տերյանի, Չարենցի ստեղծագործությունները: Իսկ ֆուտուրիզմը եկավ հաջորդելու սիմվոլիզմին: Նշանակում է՝ որքան կարևոր է գաղափար ունենալ հիշյալ գրական ուղղությունների մասին՝ ճիշտ հասկանալու համար դարաշրջանի հոգևոր կյանքի ընթացքը: Քանի որ երկու գրական ուղղությունները նպաստում են նշված հեղինակների ստեղծագործությունները ճիշտ ընկալելուն, ուստի այս աշխատանքում ներկայացնել ենք սիմվոլիզմի, ֆուտուրիզմի, գրական ուղղությունների տարածման պատմությունը՝ այն կապելով Եղիշե Չարենցի ստեղծագործությունների հետ:

Եղիշե Չարենցը նոր ակոս բացեց հայ բանաստեղծական արվեստի մեջ և իր տաղանդի վիթխարի ուժով նոր հորիզոններ ընդգծեց նրա զարգացման համար՝ մեր ազգայի բանաստեղծությունը դուրս բերելով՝ իսկական արվեստի մեծ ճանապարհ: Հայ դասական գրողների ստեղծագործությունների գրական ուղղությունների առանձնահատկությունների ուսումնասիրությունը և դասավանդումը գրականության առաջնահերթ խնդիրներից է մեկն է:

Նշանակում է՝ որքան կարևոր է գաղափար ունենալ հիշյալ գրական ուղղությունների մասին՝ ճիշտ հասկանալու համար դարաշրջանի հոգևոր կյանքի ընթացքը: Հետազոտական աշխատանքի **նպատակն** է ներկայացնել՝

- Գրական ուղղությունների առանձնահտկությունները
- Ե. Չարենցի կենսագրության հիմնական դրվագներ դասավանդման ժամանակ
- Չարենցի ստեղծագործություններում առկա գրական ուղղությունները:

Հետազոտական աշխատանքի **խնդիրներն են՝**

- Նշել գրական ուղղությունների տեսակները,
- Ստեղծագործությունները առանձնացնել ըստ գրական ուղղությունների: Չարենցի դերը հայ գրականության մեջ և գրական ուղղությունների ազդեցությունը նրա ստեղծագործությունների վրա բացառիկ է և տիպական: Նախորդ դարի խոշորագույն գրական ներկայացուցիչներից մեկը լինելով՝ Եղիշե Չարենցը և իր ստեղծագործական կյանքին վերաբերող

յուրաքանչյուր դրվագը, շարունակում են մնալ ժամանակակից գրական կյանքի ուշադրության կենտրոնում:

Հանճարեղ բանաստեղծը, լինելով բնավորությամբ ակտիվ, բռնկուն և շատ տպավորվող անձնավորություն, չէր կարող հեռու մնալ գրական պայքարից և չազդվեր գրական տարբեր հոսանքներից ու ուղղություններից:

Քչերի կյանքն է դառնում բոլորի ուշադրության առարկան, ինչպես Չարենցինը: Ժամանակը անջնջելի կնիք դրեց մեծ հանճարի անհատականության վրա, որն արտացոլվեց նրա ստեղծագործություններից շատերում, որոնք չափազանց դրամատիկական վկայաություններ են ժամանակի, մարդու իրականության հարաբերությունների մասին:

Ավելի լավ, քան Չարենցն է գրում իր մասին, դժվար է ասել, և սա բոլորովին էլ անհամեստություն չէ, այլ կրկին տաղանդի արտահայտություն՝ հասկանալ ու գնահատել իրեն ըստ արժանավույն:

Ե՛ս եմ հիմա – մի պոետ. և իմ անունը – Չարենց –
Պիտի վառվի դարերում, պիտի լինի բա՛ռնր ու մեծ[1]:

Կարևոր է սովորողներին ճիշտ ներկայացնել այս հազվագյուտ երջանիկ տաղանդի և դժբախտ անհատի դերն իր ապրած ժամանակաշրջանում՝ ընդգծելով նրա և գրական ուղղությունների կապն ու առընչությունները, փորձելով, հատկապես, կարևորել անհատի դերը հասարակության մեջ և նրա կրած ազդեցություններն ու ձախ մոլորությունները, որոնք ստեղծագործական ճշմարիտ ճանապարհի որոնումների արդյունք են:

[1] Չարենց Ե, Պոեմներ, բանաստեղծություններ, Երևան, 1984, էջ 281

1. Եղիշե Չարենցի՝ գրական ուղղությունների որոնումներն ու «ձախ» մոլորությունները

Հայ նորագույն գրականությունը՝ գրական ուղղությունների փոփոխություններով կարելի է համարել հայ գրական կյանքի փառավոր էջերից մեկը, որի վրա իրենց կնիքն են թողել ժամանակի հասարակական-քաղաքական միտքն ու տիրող գաղափարախոսությունը: Այս ժամանակաշրջանի հայ գրական կյանքի ամենավառ ներկայացուցիչներից էր նաև Եղիշե Չարենցը:

Չարենցն ստեղծագործեց ընդամենը քսանհինգ տարի, հրապարակելով բոլոր ժանրերի հարյուրավոր երկեր, որոնք հետաքրքիր ու արդիական են առ այսօր: Չարենց ստեղծագործությունը չի հնանում, այլ գնալով, յուրաքանչյուր սերնդի հետ, հնչում է ավելի նոր ու նորովի:

1922-1924 թթ. համարում ենք Չարենցի ստեղծագործական զարգացման երրորդ փուլը: Նոր արվեստի այս շրջանում Չարենցը նորագույն պոեզիայի ուղիների որոնման կիզակետում էր: Գրել է «Ռոմանս անսեր» պոեմը (1922), «Պոեզոզուռնա»[2] ժողովածուն (1922), «Ասպետական» ռապսոդիան[3] (1922), «Կոմալմանախ»[4] ժողովածուն (1924), «Երկիր Նաիրի» վեպը (1921-1924): Հարել է «Երեքի» դեկլարացիային (1922), մասնակցել «Standard» ամսագրի կազմմանն ու միակ համարի տպագրությանը (1924):

Չարենցը գրեց մի շարք հոդվածներ նոր և արդի արվեստի և պոեզիայի վերաբերյալ, որոնցից էին «Ի՞նչ պետք է լինի արդի հայ բանաստեղծությունը» (1922), «Ապադասակարգ» (1922), «Ինտիլիգենտը և դեկլարացիան» (1922), «Pro domo sua» (1923), «Արդի ռուսական պոեզիա» (1923), «Պրոլետարական գրականությու՞ն, թե խուլիգանների գրական արշավանք» (1923):

Եղիշե Չարենցի կյանքի ժամանակը, որ համընկավ հարազատ ժողովրդի ողբերգական իրադարձություններով հարուստ ճակատագրին, պայմանավորեց և ուղենշեց նրա ամբողջ ստեղծագործության բովանդակությունը:

Ցեղասպանությունը Եղիշե Չարենցի կյանքի ժամանակն է: Բայց ոչ միայն այդ: Նրա կյանքը շարունակվեց տոտալիտար համակարգի պայմաններում, որն

---

[2] Չարենց Ե, Պոեմներ, բանաստեղծություններ, Երևան, 1984, էջ 315:
[3] Նույն տեղում, էջ 323:
[4] Նույն տեղում, էջ 339:

ուներ յուրովի ողբերգական դիմանկար՝ նման նախորդ շրջափուլի հանցանշաններին: Չարենցի դրաման խորանում է նրանով՝ վերածվելով ստեղծագործող մարդու համար բացառիկ ողբերգության, որ նա և՛ տառապում էր, և՛ լուսավոր ապագայի հույսեր փայփայում: Հոգու այս երկփեղկվածությունը ներկա է 1936-1937 թվականներին գրված նրա հալածական բանաստեղծություններում, որոնցից շատերը տպագրվեցին շատ տարիներ հետո՝ 1983-ին, Անահիտ Չարենցի «Անտիպ և չհավաքված երկեր» հատորում: Չարենցի լավատեսությունը «լուսավոր, պայծառ» ապագայի վերաբերյալ, որքան էլ անկեղծ ու հավատով լի, կարծում ենք, ուներ ռոմանտիկական գունավորում և ցեղասպանությանը հաջորդած տարիներին հայ ժողովրդին վաղվա օրվա հանդեպ հույս-հավատով համակելու և ոչ հուսահատեցնելու նպատակ, այնինչ ստալինականության բարոյական, ազգային, սոցիալ-քաղաքական հանցավոր մթնոլորտի բանաստեղծական-պատկերային մերկացումները պայմանավորած էին իրականության ռեալ զգացողությամբ ու խոր գիտակցումով:

20-րդ դարի ոչ մի հայ գրող, մինչև իսկ ստալինիզմի ականատես վկան և կենդանի մնացած նահատակը՝ Գուրգեն Մահարին, իր ստեղծագործություններում այն լայնք ու խորքով չի արտահայտել իր այդ ժամանակի ոգին, ինչ Եղիշե Չարենցը: Նրա ստեղծագործության հիմունքներով այսօր հնարավոր է բավականին մանրամասնորեն ու տիպական գունագծերով ներկայացնել եղերական ժամանակի դեմքը: Մեծ գրող լինելուց զատ՝ նաև մեծ ու անփոխարինելի պատմագիր է: Նրա ժամանակագրությունն ուղեկցում է նրա ողջ ստեղծագործությանը՝ արձակ, պոետական բոլոր ձևաչափերը, մեծ ու փոքր ամեն գրավոր խոսք, նաև ոչ երկար կյանքի էական տեսարանները՝ մինչև եղերական վախճան, մինչև անհայտ գերեզմանը:

Եղիշե Չարենցի հեղափոխականությունը փաստ է և փաստարկվում է վարպետի գրչով ստեղծված բազմաթիվ երկերով: Սակայն Չարենցին հարկ է տեսնել, զգալ ու գիտակցել «Մահվան տեսիլի», «Էպիկական լուսաբաց», «Գիրք ճանապարհի» գրքերում, 1920-ական թվականների բանաստեղծական շարքերում և «Երկիր Նաիրի» վեպում:

Սովորաբար ամեն գրող սկսվում է ավելի կամ պակաս չափով ուրիշներից կրած ազդեցությամբ: Մշտապես մնալ ազդեցության տակ՝ նշանակում է ի վերջո կործանվել, չհասնելով ինքնուրույնության: Ազդեցությունն օգտակար է, երբ գրողն աստիճանաբար ձեռք է բերում իր սեփական ձայնը և սեփական

հուզաշխարհը: Եղիշե Չարենցի սկիզբը՝ «Երեք երգ տխրադալուկ աղջկան», «Տեսիլաժամեր», «Ծիածան», «Էմալե պրոֆիլը Ձեր» բանաստեղծական շարքերը կրեցին Մեծարենցի և հատկապես Վահան Տերյանի ազդեցությունը: Բայց նույնիսկ այստեղ Չարենցը որոնում էր իրեն, և շատ ժամանակ չպահանջվեց գտնելու իր ars poetica-ն՝ բանաստեղծական արվեստը:

Բանաստեղծն առաջին շրջանում անտարբեր չեղավ նաև անցյալ դարասկզբի ստեղծագործական ուղղությունների ու հոսանքների հանդեպ, առավել հիմնավորապես կանգ առնելով սիմվոլիզմի վրա, որը բանաստեղծական մեծ նվաճումների էր հասել ինչպես հայ իրականության մեջ, այնպես էլ, առավել, Ռուսաստանում ու Եվրոպայում: Չարենցը երգում էր «Երկնային ճամփաները» և «Կապույտ հեռուները»: Նրա դեպքում դա ուներ նաև իրական նստվածք՝ ցեղասպանության ողբերգական զգացմունքներից անցում կատարել դեպի երկնային ու կապույտ՝ ասել է մաքուր, ազնիվ ու լուսավոր, երազելի մի իրականություն:

Առհասարակ նկատեմ, որ հայ գրականության հայտնի ուղղություններն ու հոսանքները ինքնաբավ և զուտ արվեստական չեն եղել, ինչպես եվրոպացիների մոտ, մեզանում դրանք պայմանավորված են ժողովրդի կյանքի հանգամանքներով, նույնիսկ այնպիսի հզոր մի ուղղություն, ինչպիսին ռոմանտիզմն է: Այստեղ դարձյալ անդրադառնամ նրա, այսպես կոչված, հեղափոխականությանը, որը տարիներ շարունակ դրոշակ դարձրինք և մթագնեցինք իսկապես ողբերգական Չարենցին: Նրա հեղափոխականությունը Հոկտեմբերյան հեղափոխության գովքը չէր, ինչպես և Մայակովսկու, այլ՝ մի նոր աշխարհի սկիզբ, որը, հույս ուներ, կբուժի հին աշխարհի հայոց ցեղասպանության վերքերը: Այդ վերաբերմունքն ազգային էր և հասարակական-պատմական: Չարենցը մեծ հայրենասեր էր, հայ ժողովրդի մեծագույն տառապյալներից, գլխավոր սերը՝ Հայաստան և հայ ժողովուրդ՝ «ժողովրդի թշնամի», «նացիոնալիստ» ահեղ մեղադրանքները ճակատին դաջված, և, իհարկե, 1937-ին պիտի խստագույնս պատժվեր՝ զրկվելով հասարակայնորեն ճանաչելի գերեզմանից անգամ:

Սիմվոլիզմը համաշխարհային արվեստի գլխավոր ստեղծագործական մեթոդներից է և արտահայտվել է թե՛ գրականության և թե՛ թատրոնի, կերպարվեստի ու երաժշտության մեջ: Գոյություն է ունեցել ի սկզբանե, սակայն 19-րդ դարում և 20-րդի սկզբում առավել բարձրաձայն խոսեց, հատկապես՝ Ֆրանսիայում (Վեռլեն, Մալարմե, Ռեմբո), ռուս գրականության մեջ՝

Մերեժկովսկի, Բրյուսով, Բալմոնտ, Սոլոգուբ, Ալեքսանդր Բլոկ և այլն: Այստեղ աշխարհի երևույթների հիմքում սիմվոլն է՝ խորհրդանիշը, որպես «իդեալականի և զգայականի» համադրություն: Եղիշե Չարենցի սիմվոլիզմը գրքային երևույթ չէ, այլ՝ իր աշխարհընկալումը, կյանքի դուռը բացելու բանալի:

Եղիշե Չարենցը մտավ պատմության, ազգային ու սոցիալական կյանքի, ժողովրդի ճակատագրի, ժողովրդի կենսափիլիսոփայության, անհատի ու հասարակության, հայրենիքի երեկվա, ներկայի ու գալիք օրվա, աշխարհակործան ու աշխարհաստեղծ շարժումների և շատ ու տարբեր երևույթների մեջ, փորձելով պարզել ո՞վ ենք մենք, որտեղի՞ց ենք գալիս և ո՞ւր ենք գնում, ո՞րն է մեր էթնոգենեզի տեղը, դարն ու նշանակությունը մարդկության հոգու աշխարհագրության տարածքում: Թվում է, իր հետաքրքրություններով նա կարող էր հռչակավոր գիտնական լինել, բայց դարձավ հիրավի հանճարեղ բանաստեղծ:

Սիմվոլիզմին հաջորդած ժամանակաշրջանում՝ հազիվ երկու տասնամյակ, Չարենցն աշխարհին հարաբերեց բացարձակապես իր նման, ոչ այս կամ այն մեթոդով և ստեղծագործական ուղղությամբ, նա ինքնին ուղղություն էր, յուրակերպ հայացք, նման չէր ոչ մեկին, և ոչ ոք նրան նման չէր, այնքան խոր ու լայնատարած, որ նրա հուզաշխարհում կտեղավորվեին շատ ու տարբեր աշխարհընկալումներ: Չարենցը ուղիղ և միագիծ չէր, այլ՝ զիգզագ ու բազմագիծ, անսանձելի ալեկոծության նման և՛ քնարական բանաստեղծություններում, և՛ էպիկական պոեմներում ու բալլադներում: Նրա ստեղծագործությունն արտացոլեց մարդու, հասարակության ու ժողովրդի մտահուզական գրեթե բոլոր վիճակները: Նրա գրականությունն անպարագիծ կյանքի ու ժամանակի յուրահատուկ հանրագիտարան է:

«Դանթեական առասպել»[5], «Ազգային երազ»[6], «Ամբոխները խելագարված»[7], «Խմբապետ Շավարշը»[8] և շատ ուրիշ պոեմներ ինքնատիպ ողերգություններ են՝ գրված սրտի ցավով ու մտքի ցավատանջ լարվածությամբ: Դրանք յուրահատուկ պոետական վեպեր են: Առհասարակ պիտի նկատել, որ Չարենցը հաճախ իր պոեմները պատմում է իբրև էպոս՝ ժողովրդական վեպ, հատկանիշ, որն ընդարձակում է նրա պատումի դաշտը և դեպքերի ու

[5] Նույն տեղում, էջ 14:
[6] Նույն տեղում, էջ 38:
[7] Նույն տեղում, էջ 70:
[8] Նույն տեղում, էջ 217:

հերոսների դերակատարությունն այդ դաշտում: Չարենցի բանաստեղծական շարքերն ու գրքերն առանձին-առանձին գագաթներ են, իսկ բոլորը միասին՝ լեռնաշղթա, ինչպես մեծ Արարատից հյուսիս-արևմուտք տարածվող Հայկական պարը: Հնարավոր չէ հայոց բնապատկերը ճշմարիտ ընկալել առանց այդ լեռնաշղթայի: Չարենցը ստեղծեց գրական մեծ ու անփոխարինելի աշխարհագրություն, առանց որի հնարավուր չէ պատկերացնել մեր գրականության հոգու և մարմնի աշխարհագրությունը:

1920-ական թվականների սկզբին Եղիշե Չարենցը գրեց ու հրատարակեց հայ գրականության ամենաառեղծվածային և ողբերգական գործերից մեկը՝ «Երկիր Նաիրին», և ժանրը բնորոշեց իբրև «պոեմանման վեպ»: «Էպիկական լուսաբաց»[9] (1930 թ.) և «Գիրք ճանապարհի»[10] (1934 թ.) գրքերը նշանակալից երևույթներ են ինչպես Չարենցի, այնպես էլ 20-րդ դարի հայոց պոեզիայում:

Երկրորդն, իսկապես, ճանապարհի գիրք է, այնքան իմաստուն և օգտակար խորհուրդներով, առանց որոնց հազիվ թե հնարավոր է ապահով ապրել այս աշխարհում:

[9] Նույն տեղում, էջ 358:
[10] Նույն տեղում, էջ 465:

2.Եղիշե Չարենցի և գրական ուղղությունները թեմայի ուսուցման առանձնահատկությունները 7-րդ դասարանում

Գրականությունը ուսուցանելու արդյունավետ մեթոդների գիտական համակարգ է: Գաղտնիք չէ, որ ուսուցումը երկկողմանի գործընթաց է՝ ուսուցանող (ուսուցիչ) և ուսուցանվող (աշակերտ):

Չնայած որ ուսուցանվող մեթոդների մշակույթը դարերի պատմություն ունի, այդուհանդերձ թե՛ մանկավարժները, թե՛ մեթոդիստները մինչև օրս էլ վիճաբանում են մեթոդների արդյունավետության շուրջ, ինչի արդյունքում մշակվում ու դպրոց են ներմուծվում դասավանդման ավելի կատարյալ ու արդյունավետ մեթոդներ:

Վերջին տարիներին մանկավարժության մեջ հաճախ է խոսվում դպրոցը հասարակության ներկա պահանջներին համապատասխան վերակառուցելու մասին: Խնդիր է դրվում վերանայելու կրթության բովանդակությունը, ուսումնական պլանները, ծրագրերը, դպրոցը ենթարկել արմատական վերակառուցման և ուսումը կազմակերպել նոր սկզբունքներով:

Դպրոց հաճախելու առաջին օրերից ուսուցումը դառնում է երեխայի աշխարհընկալման հիմնական միջոցը, որն էլ մտածողության ընթացքին տալիս է կազմակերպված ու նպատակաուղղված բնույթ: Ուսուցումը աշխատատար, բարդ ու բազմապահանջ , հոգեբանական, մտավոր ու ֆիզիկական լարում, կամային ջանք ու մեծ եռանդ պահանջող դժվարին գործընթաց է: Այն հաջողությամբ իրականացնելու համար մանկավարժությունը հենվում է մի շարք գիտությունների՝ սոցոլոգիայի, փիլիսոփայության նվաճումների վրա:

Ուսուցիչը պետք է ձգտի, որ ուսուցումն ու դաստիարակությունն ընթանան միասնաբար, որպեսզի լինի դաստիարակող, իսկ դաստիարակչական աշխատանքի ընթացքում երեխաների մեջ ոչ միայն պատվաստվեն բարոյական հմտություններ, այլև հաղորդվեն օգտակար գիտելիքներ, բարձրանա նրամց մտավոր կարողությունների զարգացման մակարդակը: Դպրոց մտնելով երեխայի կյանքում արմատական բեկում է առաջանում:

Սովորաբար երեխայի մտածողությունը ձևավորվում ու զարգանում է ուսուցանվող նյութի միջոցով: Աշակերտներին մատուցվող նյութն առաջին հերթին պետք է լինի ճշմարիտ, ունենա կենսական նշանակություն:

Հաշվի առնելով նյութի առանձնահատկությունները և բուն դասի նպատակն ու խնդիրները, անհրաժեշտ է, որ ուսուցիչն ինքը որոշի թե՛ դասի տիպը, թե՛ այն մեթոդները, որոնց միջոցով պետք է կատարվի ուսուցումը: Նյութի յուրաքանչյուր մաս, յուրաքանչյուր հատված աշակերտների համար պետք է դառնա գիտակցված, հասկանալի և երեխաների համար ոչինչ անհասկանալի չմնա: Դասի հաջողության գրավականներից մեկն էլ նյութի յուրացման փուլերի խելացի կազմակերպումն է: Գրականության դասն իր կառուցվածքով տարբերվում է մյուս առարկաներից, նրանով, որ այստեղ օգտագործվում են բազմաբնույթ միջոցներ տվյալ թեման յուրացնելու համար:

Գրականության ուսուցիչը մեծ գիտապաշար պետք է ունենա ոչ միայն գրականություն առարկայից, այլև պետք է գերազանց իմացություն ունենա մանկավարժություն, փիլիսոփայություն, հեգեբանություն, մարդաբանություն, լեզվաբանություն, գեղագիտություն ու պատմություն առարկաներից՝ գրողին, նրա ստեղծագործությունն ու ժամանակաշրջանը համապարփակ ներկայացնելու համար, ինչպես նաև կարողանա վերհանել միջառարկայական կապերը:

1. Գրականության դասավանդման մեթոդիկան մանկավարժության ուսուցողական համակարգից առանձնանում է իր մեթոդական համակարգին ավելի նպատակահարմար մեթոդները:

2. Հոգեբանության և գրականության մեթոդիկայի կապը երկու կարևոր առանձնահատկություն ունի. տարբեր ներաշխարհ ունեցող կերպարներ, որոնցից յուրաքանչյուրը իր ազդեցությունն է թողնում աշակերտների վրա, և մյուս կողմը՝ հոգեբանությունը, օգնում է ուսուցչին կողմնորոշվել ուսուցանվող նյութը մատուցելիս՝ հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները:

3. Գաղտնքի չէ, որ գրական երկը վերլուծելիս հաճախ խոչընդոտ է դառնում ստեղծագործության լեզուն, անհրաժեշտ է, որ ուսուցիչը գերազանց տիրապետի հայոց լեզվի զարգացման բոլոր շրջափուլերին ՝ գրաբար, միջին հայերեն, աշխարհաբար (գրական երկու լեզուներին արևմտահայերեն ու արևելահայերեն), որպեսզի կարողանա ճիշտ ներկայացնել գրողի լեզուն ու ոճը:

4. Գրական ստեղծագործության ամենամեծ արժեքը մարդն է, մարդկային կյանքն ու ճակատագիրը:

5. Գրականությունն իր մեջ ներառում է փիլիսոփայության տարրեր: Յուրաքանչյուր գրող ինքնին նաև փիլիսոփա է և աշխարհը ներկայացնում է իր դիտակետից:

6. Գեղագիտությունն ու գրականությունը սերտորեն փոխկապակցված են. ի վերջո գրական երկի և ընդհանրապես գրականության նպատակը գեղեցիկի բացահայտումն է, կատարյալի ու աստվածայինի փնտրտուքն իրական կյանքում, շրջապատող միջավայրում:

Դասավանդող ուսուցիչը Եղիշե Չարենցի կյանքը, գրական ստեղծագործությունը, ստեղծագործության ընդհանուր բնութագիրն ու «Տաղարան» շարքի բանաստեղծություններից «Էլի գարուն կգա, կբացվի վարդը…» ստեղծագործությունը պետք է ներկայացնի հանրակրթական դպրոցի 7-րդ դասարանի ուսումնական պլանին համապատասխան: Անհրաժեշտ է օգտագործել ժամանակակից մեթոդաբանական օրենքները՝ ընթերցում, վերաշարադրում, զրույց, բանավեճ, ապա եզրահանգում, և այս բոլորը մտնում են ամենահին ու ամենատարածված մեթոդի մեջ՝ խոսքային:

Դասի նպատակը: Աշակերտներին ծանոթացնել ժամանակի հասարակական-քաղաքական կյանքին, ներկայացնել Եղիշե Չարենցի կենսագրությունը՝ կանգ առնելով նրա կյանքի առավել հետաքրքրաշարժ և բեկումնային շրջանների վրա: Այս ամենին զուգահեռ ներկայացնել նաև Եղիշե Չարենցի ստեղծագործական ուղին, տալ դրա պարբերացումը, ցույց տալ ստեղծագործությունների ոճական փոփոխությունները ու կենտրոնանալ «Տաղարան» շարքի բանաստեղծություններից «Էլի գարուն կգա, կբացվի վարդը…» ստեղծագործության վրա՝ ցույց տալով «Տաղարանի» գրելու շարժառիթները, խնդիրները ու կապը հայ մեծ աշուղ-բանաստեղծ Սայաթ-Նովայի հետ : Կապ հաստատենք Սայաթ-Նովայի ու Եղիշե Չարենցի ապրած ժամանակաշրջանի միջև:

Դասի կահավորումը: Դասը անցկացնելու համար օգտագործել մի շարք դիդակտիկ նյութեր, որոնք են.

- Եղիշե Չարենցի դիմանկարը
- Թղթապանակ, որը կներկայացնի Եղիշե Չարենցի կյանքին ու ստեղծագործությանը վերաբերող նկարներ, ինչպես նաև կպատկերի ժամանակի հասարականան-քաղաքական ոգին:

- Թերթերից հատվածներ, որտեղ ներկայացված են Եղիշե Չարենցի քաղաքական ու հասարակական հայացքները ու դրանց արձագանքը խորհրդային մամուլում:
- Պատի պլակատ, որտեղ ներկայացված կլինի Եղիշե Չարենցի ժողովածուները՝ իրենց ստեղծման տարեթվերով:
- Ձայնագրություններ, որտեղ կհնչեն Եղիշե Չարենցի ստեղծագործությունները:

Նոր հասկացությունների ուսուցանում: Աշակերտների ուշադրությունը հրավիրել հետևյալ հասկացությունների վրա.

- խորհրդապաշտություն (սիմվոլիզմ)
- ապագայապաշտություն(ֆուտուրիզմ)
- ռոմանտիզմ
- հեղափոխական ռեալիզմ
- սոցիալիստական ռեալիզմ

Հարկ է ուշադրություն դարձնել նաև «Էլի գարուն կգա, կբացվի վարդը…» բանաստեղծության մեջ առկա մի շարք բառերի բացատրությանը՝ դրանք կապելով Սայաթ-Նովայի բանաստեղծական ոճի հետ: Այդ բառերն են.

- բլբուլ
- բաղ
- էշխ
- գոզալ

Դասի ուսուցման խնդիրները: Սովորողների մեջ համապատասխան հմտություններ և ունակություններ, պատմական մտածողություն, ինքնուրույն դատողություններ կատարելու կարողության զարգացում, նրանց ուսուցման ակտիվացում: Կարևոր է ուսուցման ժամանակ տալ ժամանակի գաղափարական, քաղաքական համակարգների մասին գնահատականներ և սովորողերին մղել կատարելու ինքնուրույն դատողություններ տվյալ ժամանակահատվածի մասին:

Դասի ընթացքը:

1. Ներկայացնել Եղիշե Չարեցի կենսագրությունը՝ հասարակական-քաղաքական գործունեությունն ու ստեղծագործության ընդհանուր բնութագիրը:

2. Ցույց տալ «Տաղարան» շարքի դերը Եղիշե Չարենցի ստեղծագործության մեջ՝ կապ հաստատելով գրական ուղղությունների, մյուս շարքերի և Սայաթ-Նովայի գրական կյանքի հետ:

3. Վերլուծել «Էլի գարուն կգա, կբացվի վարդը…» բանաստեղծությունը:

4. Դասարանը բաժանել խմբերի, որոնք պետք է ներկայացնեն ու մեկնաբանեն իրենց դուր եկած քառատողը: Միաժամանակ խմբերը պետք է ներկայացնեն քառատողը» և համեմատեն Սայաթ-Նովայի բանաստեղծություններից մեկի հետ, որը ոճական առումով կհամապատասխանի վերը նշված բանաստեղծության հետ:

5. Ձայնագրությունների միջոցով ունկնդրել «Էլի գարուն կգա, կբացվի վարդը…» բանաստեղծությունը:

6. Երեխաներին հանձնարարեն տանը բանաստեղծությանը համահունչ, իրենց պատկերացմամբ նկարել որևիցե նկար:

7. Տանը երեխաները պատրաստեն շարադրություն՝ ներկայացնելով բանաստեղծության բուն իմաստը:

8. Հանձնարարել աշակերտներին ներկայացնել իրենց դիտարկումներն ու եզրահանգումները թեմայի վերաբերյալ:

Եզրակացություն

Եղիշե Չարենցը լինելով 20-րդ դարի հայ խոշորագույն բանաստեղծներից մեկը անջնջելի հետք է թողել հայ նորագույն գրականության վրա ու իրավամբ համարվում է հայ գրական ամենախոշոր ներկայացուցիչներից մեջ:

Նա ապրել ու ստեղծագործել է մի ժամանակաշրջանում, երբ քաղաքական պայքարն ու դրա հետ կապված փոփոխությունները իրենց հետքն էին թողնում նաև գրական կյանքի վրա ու կանխորոշում էին նաև ստեղծագործողների գրելաոճ:

Եղիշե Չարենցը իր ստեղծագործական կյանքի ընթացքում ևս տուրք է տվել այդ գրական ուղղությունների փոփոխություններին, հարել դրանց, ստեղծագործել այդ ոճերի ազդեցությամբ, սակայն երբևիցե դրանից չի խամրել նրա բանաստեղծական տաղանդն ու համբավը:

Հայ գրականության այս գագաթը ստեղծագործել է սիմվոլիզմի, հեղափոխական ռոմանտիզմի, սոցիալիստական ռեալիզմի, ֆուտուրիզմի ազդեցության տակ ու ստեղծել անգնահատելի արժեք ներկայացնող գործեր, որոնք այսօր էլ լուրջ քննության տեղիք են տալիս ու անսպառ հետազոտության նյութ են պարունակում:

Իր ստեղծագործական կյանքի սկզբում նա ստեղծագործեց սիմվոլիզմի ազդեցության տակ: Այս ոճի անմար ստեղծագործություններ է գրել իր ժամանակի հայ մեկ այլ անվանի բանաստեղծ Վահան Տերյանը, ով հիրավի համարվում է հայկական սիմվոլիստական գրականության գագաթ: Թեև Եղիշե Չարենցը ավելի քիչ է ստեղծագործել այս ուղղությամբ, քան Տերյանը, սակայն, այդ շրջանի նրա ստեղծագործությունները քիչ հայտնի չեն քան Տերյանինը:

Սոցիալիստական գաղափարների տարածումն ու քաղաքական նոր իրադրությունը երիտասարդ ստեղծագործողին մղեց փոխել իր գրական ոճը և ստեղծագործել պրոլետարական գրականության ստեղծողի ավանդույթներով: Այս շրջանում ևս Չարենցը գտավ իր տեղը հայ գրական կյանքում ու թեև դատապարտվեց շատերի կողմից, և ինքն էլ դատապարտեց շատերին, սակայն, գրական ժառանգության առումով նա անգնահատելի հետք թողեց ամբողջ պոեզիայի վրա, որը չի չափվում միայն ներքին շրջանակներով, այլ ժամանակին նրա գրված ստեղծագործությունները համարվեցին տիրող

գաղափարաբանության ազդեցության տակ գրված լավագույն գրական ստեղծագործություններ:

Հայաստանում խորհրդային կարգերի հռչակումով, ըստ էության, փոխվեց նաև ստեղծագործողների աշխարհայացքը: Չարենցը առաջին ստեղծագործողներից էր, ով հանձն առավ գրել նոր պատմական ու քաղաքական պայմաններին համապատասխան գրականություն, որը պետք է կառուցեր ապագային գրական աշխարհն ու դրա միջոցով քարոզեր սոցիալիստական ապագայի լավ հույսերն ու քննադատեր անցյալի բացասական կողմերը: Այսպես, Չարենցի ստեղծագործական կյանքում սկսվեց ֆուտուրիզմի շրջանը, որի ժամանակ Չարենցը ստեղծագործողից վերածվեց նաև խոշոր գաղափարախոսի ու սկսեց քարոզել խորհրդային նոր գաղափարներն ու ելքը տեսավ ազգի փրկության սոցիալիզմի հաղթանակի մեջ: Թեև հետագայում նրա այս ստեղծագործությունները արժանացան ևս քննադատության, սկայան գրական առումով Չարենցը ֆուտուրիզմի մեջ ևս իրեն դրսևորեց լավագույնս:

Ուսումնասիրելով Չարենցի ու ժամանակի գրական ոճերի ազդեցությունը նրա ստեղծագործությունների վրա կարելի է եզրակացնել, որ Եղիշե Չարենցը յուրաքանչյուր ոճում ստեղծագործելիս չի կորցրել իր սեփական դիմագիծը ու հանդես է եկել, որպես ազգային գրականության ստեղծող ու ջատագով: Նա երբեք չի հեռացել ազգային գրականության ավանդներից, թեև տուրք է տվել նոր գաղափարների ազդեցությանը, սակայն վերջնական արդյունքում նա հանդես է եկել հայ գրականության զարգացման դիրքերից:

Եղիշե Չարենցի ստեղծագործական ուղին բուռն ու բազմաբովանդակ է, ինչպես իր ստեղծագործությունները, և անկախ ժամանակաշրջանից ու քաղաքական իրադարձություններից, նա միշտ եղել է ու կմնա հայ նորագույն գրականության ամենավառ ու ամենահանճարեղ ստեղծագործողներից մեկը:

Եկանք եզրակացության, որ.

- Եղիշե Չարենցը լինելով հայ նորագույն գրականության հիմնադիր՝ գտնվում էր 1920-1930-ական թվականների գրական պայքարի կիզակետում:
- Եղիշե Չարենցը խորհրդապաշտության ազդեցությամբ գրում է մի շարք ստեղծագործությունները, որոնք նորագույն շրջանի լավագույն երկերից են:

- Եղիշե Չարենցը գրեց մի շարք հեղափոխական երկեր, որոնցով անցում կատարվեց հեղափոխական ռոմանտիզմից սոցիալիստական ռեալիզմի մեթոդին:
- Եղիշե Չարենցի և գրական ուղղությունները թեմայի ուսուցմումը 7-րդ դասարանում զարգացնում է սովորողի կարողունակությունները ու հմտությունները թեմայի ուսուցման ժամանակ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Գասպարյան Դ., Եղիշե Չարենց. Հայոց բանաստեղծության մայրաքաղաքը, Երևան, 1996:

2. Հայ գրականություն, Գիրք երրորդ, Երևան, 2007, :

3. Գեղարվեստական մեթոդ և գրական պրոցես, Երևան, 1990:

4. Գասպարյան Դ., Հանրակրթական դպրոցի 7-րդ դասարանի դասագիրք, Երևան, 2011:

5. Գասպարյան Մ., Գրականության տեսության ուսուցումը հանրակրթական դպրոցի միջին և ավագ դասարաններում, Երևան, 2012:

6. Տողանյան Ն., Խաչատրյան Հ. , Գրականություն 7, մեթոդական ձեռնարկ, Երևան 2008:

7. Համացանց: